րեւութին վերայ յուղարկելու, լուսաւորուած կէտերուն և մութը մնացող կէտերուն մէջ ջերմութեան բարեխառնութիւնը հաւասարակշիռ պահելու համար, ինչպէս նաև գիշերուան ժամանակ կ'արգիլէ երկրիս ջերմութեան արտաթորումն ու կորուստը՝ թոյլ չտալով որ չափէ դուրս սաստկութեամբ ցրտութիւն գայ յառաջ արեգակնային լոյս չտեսնող մասերուն մէջ.

Եւ ահա այժմ ես կ'տեսնեմք թէ մի և նոյն մթնոլորտը կ'պահպանէ զմեզ երկնաքարերու անձրևներէն, որք առանց նորա անշուշտ կ'սպաննէին զմեզ.

Վերջացնելով խօսքերնիս կ'ասեմք թէ՝ երկրիս մթնոլորտը տօթարգել (écran) մի է զմեզ արեգական դէմ պահպանելու, վերարկու մի է ցրտին դէմ պատսպարելու, և վահան մի է արարչական նիւթոց քարկոծմանը դէմ զմեզ պաշտպանելու համար.

(Վերջ.) ՆԻԿ. Մ. ԹԻՒԼՊԷՆՑՃԵԱՆՑ.

ՀԱՄԱՌՕՏ *) ՀԱՇԻՒ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ.

Երջանկայիշատակ Ներսէս Ե. ամենայն Հայոց Կաթուղիկոսը — հօրս մահից յետոյ — 1850 թուին վերցնում է ինձ իր մօտ հոգեզաւակ և տալիս է Մայր Աթոռի ժառանգաւորաց Դպրանոցը. Այս տեղից 1856 թուին ուսումս աւարտելուց յետոյ նոյնպէս Ներսէս Ե. Կաթուղիկոսի և Սինօդի 676 համար հրամանգրով ես կարգվում եմ եկեղեցական դպիր տեղւոյս Ս. Պետրոս և Պօղոս եկեղեցում, ուր և յետոյ ձեռնադրվում եմ քահանայ. Մի և նոյն հրամանի զօրութեամբ գործակալը յանձնում է ինձ Թեմական Դպրանոցն իրեն պարագաներով. Ես բաց եմ անում այդ թուին Օգոստոսի վերջերում՝ ինչ ինչ հանգամանքներով փակուած՝ Թեմական Դպրանոցը, ժողովում եմ աշակերտներ և սկիզբն եմ դնում դասատուութեան. Դպրանոցը կառավարում եմ մինչև 1857 թիւը, երբ գալիս է Երևան Ստեփան Վարդապետը փոխանորդութեան պաշտօնով. Հայր փոխանորդը ձեռք է առնում ի թիւս այլոց և Դպրանոցի կարգադրութիւնը. Մինչև 1862 թիւը աւանդում եմ Կրօնի և Հայոց լեզուի դասերը, այնուհետև երկու տարու չափ այս պաշտօններիս վերայ աւելանում է և Դպրանոցի տեսչութիւնը, որոնց հետ նաև հոգաբարձութիւնը. Ժամանակաւորապէս այս պաշտօնը վարելուց յետոյ՝ գալիս է Գրիգոր վարդապետ Աղափիրեանցը, որ և սկսում է կառավարել Դպրանոցը՝ թողնելով ինձ իմ նախկին պարտականութիւնները մինչև 1868 թիւը, երբ մուտ է գործում Երևան փոխանորդ Սերովբէ Ե-

(*) Հաշուիս մանրամասնութիւնները գտնվում են դպրոցի գործերում ու մասամբ հրատարակուած են զանազան լրագրներում.

պիսկոպոսը, որի բռնած ուղղութեանը խոնարհել չկամենալով՝ հեռանումեմ Դպրանոցից, չընայելով, որ սրբազանը այնքան խնդրումէր ինձ մնալ։

Բ.

Թեմական Դպրանոցին իմ հրաժարականը տալով՝ մնումեմ ուսուցիչ Կրօնի և Հայոց լեզուի Գայիանեան հայ օրիորդաց ծխական դպրոցում, ուր ուսուցանումէի գրեթէ բացուած օրից։ 1866 թուին Պարոնայք՝ Ռուբէն Հասան-Ջալալեանց, Յովհաննէս Ղօրղանեան, Վասիլ Եղիազարեան, ես և ուրիշները միասին խորհրդակցելով՝ որոշումենք աշխատել մեր քաղաքում մի օրիորդական դպրոց բանալ։ Դիմումենք թոյլտուութիւն խնդրելու Հոգևոր Իշխանութիւնից, որ և ստանումենք։ Մի քանի ժամանակ Թեմական Դպրանոցից ստացած մեր ռոճիկներից մի մասը տալիս ենք նոր Դպրոցի համար կարևոր պարագաներ գնելուն։ Վերջապէս 1866 թուին Ապրելի 13ին բաց ենք անում Գայիանեան Ուսումնարանը, բաժանումենք մեր մէջ դասաւանդելի առարկաները, ինձ ընկնումէ Կրօն և Հայոց լեզուի դասերը։ Ամենքս էլ ձրի ենք դասախօսում մինչև 1868 թիւը։ Դպրոցի կառավարիչ ընտրվումէ Պ. Ռուբէն Հ.-Ջալալեանցը, որ գրեթէ հիմնադիր և բարերարն էր նորաբաց դպրոցի, որ ամենից սրտացաւ ու հոգատարն էր, որ մեծ տոկունութեամբ տարաւ շատ նեղութիւններ։ Վերջապէս ամենայն յաջողութեամբ յաղթեց դպրոցի ծննդեանը վտանգ սպառնող պարագաներին։ 1868 թուից դպրոցի տեսչութիւնը մնումէ Տիկին Սոնա Մադաթեանցի վրա։ 1872 թիւը։ Այս թուին գալիս է Երևան Թեմական վերատեսչի պաշտօնով Հայր Խորէն վարդապետ Ստեփանէն, որի խնդրանքը ես դարձեալ գնումեմ Թեմական դպրանոցը։ այնտեղ էլ եմ սկսում Կրօնի և Հայոց լեզուի դասաւանդութիւնը։ 1873 թիւը։ Հայր-սուրբի հետ միասին անէ տուն ենք մանգալի յօգուտ Դպրանոցի ստորագրութիւններ ժողովում, որ հասաւ մինչև 7500 բուբլու։ Այս գումարն էր, որ անցեալ տարիներում ժողովեց Թեմական Դպրանոցի հոգաբարձութիւնը։

Հայր Խորէն վարդապետի գնալուց յետոյ Գայիանեան Դպրոցը մնումէ անխնամ։ Տեղւոյս փոխանորդ Եղիազար Արքեպիսկոպոսի հաստատութեամբ քաղաքիս երիտասարդներից Պ. Պ Վասիլ Եղիազարեանց, Կարապետ Ջալալեանց, Հայկ Տ. Ամրակումեանց, Տրդատ Վարդանեանց ինձ ընտրումեն կառավարիչ և Կրօնի ու Հայ լեզուի ու պատմութեան ուսուցիչ։ Պ. Տրդատին Գանձապահ և իրենք էլ իրենց մէջ մնացած առարկաները բաժանելով՝ ձրի դասեր են տուել։ Սակայն երկար չէ տևումմ։ Մի տարու չափ գործելուց յետոյ հեռանումեն ամենքը։

Տեսնելով Դպրոցի անտէր և աղքատ վիճակը։ 1874 թուին Մայիս ամսում ես ժողով եմ հրաւիրում տեղւոյս Հայ-հասարակութեանը։

ներկայացնում եմ նրանց իրենց դպրոցի աննախանձելի դրութիւնը և յորդորում ուշ դարձնել՝ կարևոր կարգադրութիւններ անել։

Ժողովուրդը միահամուռ ձայնակցութեամբ ընտրում է ինձ տեսուչ—խնդրելով իմ համաձայնութիւնը։ ընտրումեն նաև հոգաբարձուհիներ և առաջարկումեն Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութեանը։

Նոյն թուի Յունիսին Նորին Վեհ — Օծութիւն Ս. և Ս. Գէորգ Դ. ամենայն Հայոց Կաթուղիկոսն իր հայրապետական Կոնդակով — 286 համարով հաստատում է տիկինների հոգաբարձուհութիւնը և իմ Տեսչութիւնը։

Գ.

Որպէս զի հասարակութիւնը մի որոշ գաղափար կազմի իմ գործածներիս վրայօք։ աւելորդ չեմ համարում մի քանի խօսքով նկարագրել Գայիանեան Օրիորդաց Հայ դպրոցի այն ժամանակուայ դրութիւնը։ երբ յանձնուեց իմ տեսչութեանը։

Դպրոցը զետեղուած էր մի անյարմար շինութեան մէջ—նեղ ու խոնաւ առանց տախտակած յատակի սենեակներով—հինգ հատ հին նստարաններ, մի հատ սեղան 23—24 աշակերտուհիներով մի դասատան մէջ և 72 ռուբլի 19 կ. պարտքով։

Ժամանում է 1874 թուի ուսումնական տարեգլուխ Սեպտեմբերը։ դիմում եմ (պէտք է փոխանակ ամեն անգամ կրկնելու, մի անգամ ասեմ, որ հոգաբարձուհիների հետ եմ արել ամեն բան) պաշտօնական թղթով Հայր Փոխանորդին և խնդրում, որ յորդորէ այն ժամանակի Թեմական տեսուչ Պ. Գէորգ Ս. Յարութիւնեանցին գալ ինձ հետ միասին կարգաւորելու դպրոցի գործերը։ Պարոնը դպրոցի աղքատ վիճակից փախչելով պատասխանում է, թէ ես գդակ չունիմ, որ դպրոցի վարժապետները գլխից վերցնեն։

Ճարահատեալ կրկին անգամ դիմում եմ Փոխանորդին խնդրելով հրաման տալ Թեմական Դպրանոցի ուսուցիչներին Գայիանեան դպրոցում ևս դասեր վերցնել մնանաւոր ռոճկով, քանի որ սա միջոց չունի առանձին ուսուցիչներ վարձելու։ Թոյլ են տալիս։ Կարևոր ուսուցիչներ գալիս են, առարկաները բաժանումեն, որը 5, որը 8 և ամենից շատը 12 ռուբլիով համաձայնումեն դաս տալ։ Այժմ դպրոցը ունէր 33 աշակերտուհիներ։

Տասն օր էր, որ դպրոցը փոքր ի շատէ կարգաւորութեան մէջ էր մտել։ բայց այս բանը նախանձի առիթ դարձաւ չարակամներին։ Անցեալը չենք կամենում վերանորոգել, արդէն նրա լոկ յիշողութիւնը զայրոյթ ու զզուանք է զարթեցնում։ . . . . Այժմ պատրաստի կերակուր վայելելու համար լաւ ախորժակ ունեցողները բռնի ուժով են կամենում մտնել։ այն ինչ մի ամիս առաջ փախչումէին . . . և Աստուած իմ, ինչեր ասես, որ չէին անում գործը խանգարելու համար։ Թշնամութիւնը իմ դէմ դրանց կողմից սաստկացաւ, մինչև որ բողո-

քեցի Նորին Վեհափառութեանը, որ և իսկոյն Սինոդի անդամներից մէկին քննիչ է ուղարկում։ Ամեն բան մերկանում է և հակառակորդներիս նամուսութիւնը, չահախնդրութիւնը, սև նախանձկոտութիւնը երևան է գալիս իր բոլոր կեղտոտութեամբ. բանն այն տեղն է հասնում, որ իմ մերձաւոր իշխանաւորը ինձնից թողութիւն, ներողութիւն է հայցում։ Այս ամենը վերջանում է նորանով, որ 1875 թուի Փետրուարի 10ին Սինոդը Փոխանորդին մի հրաման է գրում, որով բոլորովին հեռացնում է թեմական վերատեսչին Գայիանեան դպրոցի վերայ իրաւունք ունենալուց և իմ կառավարութեանն է յանձնում դպրոցի թէ ուսումնական ու թէ տնտեսական մասերը։ Բացի Սինոդի հրամանից նոյն թուի Յունիսի 14ին Նորին Վեհափառութիւնը ես ակնյայտնի տեսնելով իմ գործերը և իմ հակառակորդների լարած որոգայթները՝ տեսչութեանս անունով մի կոնդակ ես է ուղարկում, որով դպրոցը միանգամայն ինձ է հաւատում։ Այս ամենով բացվում է իմ առաջ գործունէութեան, իսկ հակառակորդներիս առաջ թշնամանքների լայն ասպարէզ։

Հաշիւ 1874 Թուի Յունիսի 1 էն մինչև Դեկտեմբերի վերջը։

Երկու պատրաստական դասատուն. աշակերտուհիներ՝ 43. աւանդուած առարկաներն են՝ Կրօն, Հայոց և Ռուսաց լեզու, Թուաբանութիւն, Երաժշտութիւն, վայելչագրութիւններ և ձեռագործ.
Մուտք. Թոշակագրամներից 260 ռ. 90 կ. Թադէոսեան Համբարձումից 100 ռ. Նուէրներ 26 ր. 21 կ. Կաթուղիկէ եկեղեցուց 72 ր. ծախուած դասագրքերից 1 ր. 80 կ. ընդամենը 460 ր. 91 կ. Ծախս լինում է՝ տեսչի. վարժուհու և ուսուցիչների ռոճիկ իսկապէս 468 ր. 62 կ. բայց վճարվում է միայն 280 ր. 62 կ. մնացածը մնում է՝ փող չլինելու պատճառաւ. դպրատան վարձ*) Յունվարից ցՍեպտեմբեր 96 ր. ուսումնարանի ծառային 44 ր. 6. կ. վառելափայտի 18 ր. 85 կ. Ջեռագործութեան մի արկղի, պահարանի և այլ բաների 18 ր. 22 կ. մանր ծախս 9 ր. 78 կ. ընդամենը 468 ր. 28 կ.։

Ե.

Աչքի առաջ ունենալով դպրոցի անյարմար շէնքը վերանորոգել եմ տալիս և տանելի կերպով յարմարացնել տալի նախկին բնակարանը ամսական վճարն աւելացնելով։ Բայց միևնոյն ժամանակ խնդիր եմ խոնարհվում տեղւոյս Պետրոս և Պօղոս եկեղեցւոյ ժողովրդականներին գալ, համաձայնիլ, դիմել Սինոդին թոյլտւութիւն խնդրելու եկեղեցական գումարով մի յարմարաւոր դպրատուն կառուցանելու համար։ Խնդիրս ընդունվում և ստացվում է հրաման։ Հանգամանքները փոխ-

(*) Նախկին գանձապահ Պ. Տրդատ Վարդանեանից տեսչութիւնս ստանում է 31 կ. գրամ. այն ինչ դպրոցը պարտական է լինում դպրատան վարձ 5 ամիսների 60 ր. ծառաների վարձ 3 ամիսների 13 ր. ընդամենը պարտք 72 ր. 19 կոպ. Ծան. Հեղ.

վումեն. այս ժամանակներում մեռնումէ մեծ. Պ. Ղեւոնդ Ղազարեանի անդրանիկ որդի Աղէքսանդրը, որի հոգու յիշատակի համար համաձայնումէ Պ. կատարել Կարապետ Վարդապետ Այվազեանի և իմ յորդորը — կառուցանել Գայիանեան դպրոցի համար մի դպրատուն.

Այս տարի ես տեսչութեանս պաշտօնի հետ վարումեմ և դպրոցական բոլոր գրագրութիւնները, աւանդումեմ Կրօնն, Հայոց լեզու, Պատմութիւն և Վայելչագրութիւն, տարեկան ռոճիկ ունենալով ընդամենը 240 րուբլի, դպրոցն ունի 60 աշակերտուհի, երկու դասարան, աւանդելի առարկաներն են՝ Կրօն, Հայոց և Ռուսաց լեզուներ, Թուաբանութիւն, Հայոց պատմութիւն, Բնագիտութիւն, Վայելչագրութիւններ, Երաժշտութիւն և Ձեռագործութիւն. Դպրոցի եկամուտն է՝ Թօշակագրամ 530 րուբլի 50 կ. Նուէրներ 291 ր. հին Թատրոնից 10 ր. գանձապահից առած պարտք 184 ր. ընդամենը 1015 ր. 50 կ. Տարեկան ծախսը՝ Տեսչին, վարժուհուն 8 ուսուցչի ռոճիկ, անցեալ տարուց մնացած 188 րուբլու հետ միասին 703 րուբլի, դպրատան վարձ 208 ր. վառելափայտի 29 ր. 60 կ. մանր ծախք 14—90, ծառային 60 ր. ընդամենը 1015 ր. 50 կ. Դուրս գալով ծախքերը մուտքից, մնումէ 184 ր. պարտք.

Ե.

1876 Թուին Տեսչութեանս համար ստանումեմ 240 ր. տարեկան ռոճիկ, իսկ դպրոցական բոլոր գրագրութիւնները և շաբաթական 13 դաս աւանդելը ձրի եմ կատարում. Դասարանները նոյնն են, աշակերտուհիները 65. առարկաների վրայ աւելացած են Ռուսաց պատմութիւն և Հայ. Չայնագրութիւն. Ուսումնարանի եկամուտն է՝ աշակերտուհիների Թօշակագրամ 545 ր. Նուէրներ զանազան անձինքներից 585 ր. հին Թատրոնի երկու ներկայացումից՝ 18 րուբլի մասնաւոր դրամի տոկոսիք 26 ր. 70 կ. ընդամենը 1174 ր. 70 կ. Տարեկան ծախսն է՝ Տեսչին, վարժուհուն և 6 ուսուցչի տարեկան ռոճիկ 623 ր. 59 կ. ծառային՝ 67 ր. դպրատան վարձ՝ 156 ր. երկու հատ նոր նստարանի — մանր ծախսերի հետ միասին 15 ր. 37 կ. վառելափայտի՝ 20 ր. 60 կ. գանձապահի պարտք 184 րուբլին վճարելով ընդամենը 1066 ր. 47 կ. որը դուրս գալով մուտքից, մնումէ դպրոցին 108 ր. 23 կ.

Զ.

1877 Թ. Տեսչութեանս համար ստանումեմ 240 րուբլի. վարումեմ գրագրութիւնները և աւանդումեմ շաբաթական 14 դաս ձրի. Դասատները, առարկաները նոյնն են, աշակերտուհիների Թիւը 66.

Ուսումնարանն ունեցել է 880*) ր. մուրհակ, որը Տիկին Մաղաթեանը 1873 Թուին յանձնելէ Խ. Վ. Ստեփանէին, սա տեղական Փոխանորդին՝ և այս վերջինը դպրոցի վարչութեանը. Ուրեմն անցեալ Թուի

*) Այս գումարը ժողված է Պ. Ռուբէն Հ. Ջալալեանը.

184 ր. 23 կոպ. հետ միասին անում է 988 ր. 23 կոպ. Դպրոցի ՀԵՐԵ՝ թոշակագրամ 765 ր. նուէր զանազան անձինքներից 417 ր. 80 կ. տոկոսիք 70 ր. 30 կ. վիճակախաղի փոխարէն իրերի վաճառումից 78 ր. 17 կոպ. ընդամենը 2320 ր. ԾԵՐԵ՝ Ցեսչի, վարժուհու Ա 5 ուսուցչի տարեկան ռոճիկ 773 ր. 50 կ. ծառային 72 ռ. վառելափայտի 38 բուբ. ցյունիս ամիսը դպրատանը, 7 հատ նստարանների, 10 աթոռների, 2 գրասեղանի, 2 գրատախտակի, սեղանի կարմիր մահուտեայ սիռոցների, 36 հատ պղնձեայ թանաքամանների, 3 հատ մեծ ճախարակների և ուսումնարանի մանր ծախս 153 ր. 29 կ. ընդամենը 1036 ր. 79 կ. որը դուրս գալով մուտքից՝ մնում է 1236 ր. 44 կ. պատրաստի դրամ։

Ուսումնարանն այս թուին Սեպտեմ. 18ին մուտ է գործում նորաշէն դպրատունը, որով թէ ազատվում է տան վարձ տալուց և թէ զետեղվում է մաքուր ու յարմարաւոր շէնքի մէջ։

Է.

Ընթերցողի համար գուցէ շատ հեշտ կթուի դպրոցի այսօրինակ քայլ առ քայլ առաջ գնալը, բայց թէ իսկապէս ո՞րքան տանջանք, ո՞րքան նեղսակրութիւններ պիտի քաշուէր մինչև այդ տեղ հասցնելու համար, յայտնի կլինի միայն նորան, ով որ գործել է, ով որ գտնուել է նոյնօրինակ գործի մէջ։ Սակայն և չպէտք է մոռանալ այն հարուածները, որոնք տեղի էին ունենում ինձ վերայ իմ բարեմիտ հակառակորդներից, որոնք այնքան առաւել կատաղում էին, որքան բարեկարգվում էր Գ. դպրոցը։ Ինձ վերայ տեղի ունեցող հարուածները ժողովրդի ձեռքից չէր. ո՞չ, ընդհակառակը այս ամենը և սրանից յետոյ ինչ որ էլ որ արել եմ, արել եմ միայն ժողովրդի աջակցութեամբ, ժողովրդի խրախուսանքով։ Իմ դէմ էին միայն անձնասէր ու շահախնդիր անձինք, որոնք ունէին անշիջանելի եռանդ, սակայն առանց աղնուութեան։ Ո՞չ մի բան ինձ ցաւ չէր պատճառում. ոչ այն զրպարտանքները, որ բարձում էին ինձ վրայ զանազան անկիւններում վրաս խօսելով, ո՞չ այն հնարովի և կեղտոտ լուրերը, որոնք թողնում էին ինձ վրայ ժողովրդի մէջ իմ բարեկամները. ցաւում էի միայն, որ դրանք չէին պատկառում ամենատմարդի տեր հրատարակել նաև լրագրներում, ի չարը գործ դնելով խմբագրների հաւատը, արատաւորելով մամուլի վսեմութիւնը . . . Ես դրանցից որին պատասխանում էի և որին անարժան համարում անգամ և ուշադրութեան. իմ հաւատը հաստատ էր ժողովրդի վրայ, ես հաստատ համոզուած էի, որ երբ և իցէ ճշմարտութիւնը երևան կգայ և բոլոր իմ հակառակորդները կորագլուխ լինելով՝ ամօթահար կլինին։

1878 թուին ես ձեռք եմ առնում նորակառոյց դպրատանը կցել մի թատրոնական բեմ երեք սենեակներով։ Պատրաստի փող չկար, բայց յոյսս մեծ էր բարեմիտ ժողովրդի վրայ։ Գործը սկսում եմ. թէև իմ հակառակորդները այս անգամ էլ ցոյց տուին իրենց ատելի թիւնը

զոգոելով ժողովրդականներից մի քանիսին գործակալ քահանայի միջոցով, այնպէս որ վարպետներիս ու մշակներիս համարեա թէ ծեծելով էին գուրս անում, սակայն ես չեմ վհատվում, դիմումեմ մերձաւոր իշխանութեանը և սրա մի հրամանը կապումէ դրանց ձեռք ու ոտքերը։ Ես նորից սկսումեմ գործը, մի կողմից հիմքն եմ քանդել տալի, մշակներ, վարպետներ բանացնում, միւս կողմից նամակներ եմ գրում ժողովրդականներից նուէր խնդրելով։ Ամառուայ տօթագին օրերումն է կատարվում այս ամենը։ Մօտ հարիւր նամակ ցրուեցի բոլորը իմ ձեռքով գրած. ժողովվեց 1034 ր. նուէր։

Այս տարում աւելանումէ մի դասատուն, աշակերտուհիների թիւը հասնումէ 85. առարկաներից Ռուսաց պատմութեան տեղ՝ մտնումէ Ընդհանուր պատմութիւն, աւելանումէ Պարը։ Մ--ա՝ գումարը 1234 ր. 44 կ. թոշակագրամ 1495 ր. նուէրներ նոր շինութեան համար 1034 ր. տոկոսիք գումարի 142 ր. 12 կ. թատրոնական վեց ներկայացումից 879 ր. 92 կ. Յովակիմ Զաքարեանի կտակից 50 ր. իրեղէնների վաճառումից 37 ր. 12 կ. ընդամենը 4874 ր. 60 կ. Ծ-Ի+ԵԸ դպրոցի՝ Տեսչին, վարժուհուն, 8 ուսուցիչներին տարեկան ռոճիկ 1442 ր. 80 կ. ծառային 88 ր. վառելափայտի 78 ր, 45 կ. 3 հատ նոր նստարանների 50 ր. 1 գրատախտակի, 1 գրասեղանի 25 ր, Բ. դասարանից բացած դրանը 20 ր. 60 կ. դպրոցի բակի պատեր քաշելուն 55 ր. 70 կ. Մոսկվայից և տեղիս խանութներից գնած ձեռագործի նիւթեղէնների 83 ր. 56 կ. զանազան ծախքեր 79 ր. 25 կ. թատրոնի երեք յարկանի բեմի և 3 սենեակների շինութեանը 1539 ր. 4 կ. 13 հատ թատրոնական նոր նստարաններին 105 ր. Դ-Ի՝Ր-Ի՝-Ն-Ի՝Ն, կտաւներին ու ներկերին 120 ր. 52 կ. դեկորացիաներ նկարելուն 205 ր. 35 կ. բոլոր ներկայացումների համար և այլ զանազան ծախսերի 63 ր. 28 կ. ընդ ամենը 3385 ր. 5 կ. որը գուրս գալով մուտքից դարձեալ մնումէ 989 ր. կ.

Ը.

2879 թուին Գայիանեան դպրոցը, որ ցայսվայր ծխական էր համարվում, վարչութեանս խնդիրքով Սինոդը ՀԷՆ-Ի-ՐԷի է վեր ածում։ Դրպրատուները և առարկաները նոյնն են, աշակերտուհիք 83։ Ե՝Ի-Մ-Ա՝ ՀԵԳԵ-Ի-ԼԸ. 989 ր. 55 կ գումարը, նուէր 264 ր. թատրոնական ներկայացումներից 1144 ր. 53 կ. թոշակագրամ 1443 ր. պար սովորողներից վարձ 141 ր. տոկոսիք 83 ր. 63 կ. ընդ ամենը 4059 ր. 71 կ. Ծ-Ի՝-՝ 2664 ր. 84 կ. ռոճիկ, տեսչի, վարժուհու և ուսուցիչների. ծառային՝ 88 ր. թատրոնի ծախսեր 126 ր. 54 կ. Երրորդ դասատունը տախտակելուն 63 ր. 99 կ. ձեռագործի նիւթեղէնների 43 ր. 70 կ. վառելափայտի 66 ր. 70 կ. զանազան մանր ծախսեր 76 ր. 45 կ. ընդ ամենը 3130 ր. 22 կ. մնումէ մայր գումար 929 ր. 49 կ. Այս տարի ես ստանումեմ տեսչութեանս համար 480 ր. իսկ շաբաթական 5 դասը աւանդումեմ և գրագրութիւնները կատարում ձրի։

Թ.

1880 թ. Վարչութիւնս ուսումնարանի նիւթական դրութիւնը ապահովելու համար դիմումէ Նորին Վեհափառութեանը խնդրել թոյլատրութիւն Երևանայ թեմի գիւղերից կալերի ժամանակ ցորեն ժողովել և սրա փոխարէն գիւղերից աշակերտուհիներ պահել ուսումնարանում։ Բայց վրա հասնելով թանգութիւնը՝ Նորին Վեհափառութիւնը հաւանելով մեր առաջարկութիւնը՝ բարեհաճումէ յետաձգել աւելի բարելից տարու։ Այսուհետև ուսումնարանն արդեն գրաւումէ ըստ ամենայնի բարեմիտների սէրը և համակրութիւնը, այն ինչ սաստիկ կատաղեցնումէ չարախնդացների զայրոյթը, գոգոումէ նրանց ատելութիւնը։ Ոչ բամբասանքին է չափ մնում, ոչ սուտ թղթակցութիւններին, մինչև անգամ առ նախանձու ուղղումեն նոր թատրոն շինել տալ ի վնաս Գայիանեանի ...թողնենք այս ամենը։ Հաւատացած լինելով՝ որ գործի դժուարութիւնը արդէն յաղթանակել եմ, որ այսուհետև դպրոցի յառաջ գնալու համար իմ ուժերս բաւական չեն, որ պէտք է վերջ դնել թշնամանքներին՝ ժողով եմ հրաւիրում և առաջարկում ընտրել արական սեռից ևս հոգաբարձուներ Նորին Վեհափառութեանն ի հաստատութիւն առաջարկելու համար։

Այս թուին բացվումէ մի դասատուն ևս - Երրորդը, առարկաները նոյնն են, աշակերտուհիների թիւը հասնումէ 89ի։ Մուտքը լինումէ՝ մայր գումարը 929 ր. 49 կ. թատրոնից 962 ր. 50 կ. նուէրներ 389 ր. 90 կ. թոշակագրամ 1611 ր. վիճակախաղից 384 ր. 55 կ. տոկոսիք 33 ր. 13 կ. ընդ ամենը 4310 ր. 37 կ. Ծ-Խ-Ը՝ Տեսչի, վարժուհու, ուսուցիչների ռոճիկ 3004 ր. ծառային 85 ր. Վեհ. Կաթուղիկոսին ընծայած թաւշի վրա մետաքսեայ և ոսկեայ թելերով գործած ճեմարանի պատկերով գորգին ծախս 79 ր. 9 կ. վառելափայտի 197 ր. 10 կ. ձեռագործի իրեղէնների 78 ր. 24 կ. ուսուցչական սենեակի տախտակելուն և պաստառելուն 44 ր. 95 կ. նոր սեղան, գրատախտակ շինելուն, բոլոր սենեակների վերանորոգելուն 111 ր. 25 կ. զանազան մանր ծախսեր 58 ր. 59 կ. ընդ ամենը 3654 ր. 22 կ. հանելով մուտքից մնումէ 656 ր. 35 կ. իմ ռոճիկը նոյնն է 480 ր. վարումեմ բոլոր գրագրութիւնները և 5 դաս տալիս եմ ձրի, այն ինչ կան 800—900 ռուբ. ստացող ուսուցիչներ։

Այս թուին Գայիանեան Ուսումնարանը խնդրումէ Նորին Վեհափառութիւնից հրամայել Պետրոս և Պօղոս եկեղեցուն, որ սրա բոլոր եկամուտը՝ ծախքերը դուրս գալուց յետոյ՝ յատկացնուի Գ. Ուսումնարանին։ Այդպէս էլ հրամայումէ բարձրագոյն Հոգևոր Իշխանութիւնը։ Այս յուսով և բացվումէ երրորդ դասարան։ Սակայն չկամ հակառակորդներս ամեն կերպով արգելք են հանդիսանում։ Ինձ լուր են տալիս, որ մտադիր են եկեղեցւոյ բոլոր եկամուտը ծախսել, ուսումնարանին ոչինչ չտալու համար։ Դարձեալ դիմումեմ Հոգևոր Իշխանութեան

նը· վերջապէս Սինոդը հրամայումէ նոյն իսկ Թեմական դպրանոցի հոգաբարձութեանը՝ որ և հաշուատեսն է քաղաքիս հայ եկեղեցիների երեսփոխանաց, ստանալ Պետրոս և Պօղոս եկեղեցուց 500 ր. և յանձնել Գայիանեան ուսումնարանին։ Սակայն այսօր վաղը ցցելով՝ մինչև այսօր էլ մնումէ։

Ժ.

1881 Թ. տեսնելով որ հակառակորդներս այնպիսի տմարդի միջոցներ են ձեռք առել իմ դէմ, որ ասելը մինչև անգամ ամօթ եմ համարում, ես յուսահատած՝ տալիս եմ իմ հրաժարականը Նորին Վեհափառութեանը։ Սակայն Նորին Վեհ. Օծութիւնը չընդունելով հրաժարականս՝ իր մօտ է կանչում ինձ, իր հայրական յորդորներով խրախուսումէ ինձ և կրկին անգամ ուսումնարանը ինձ հաւատում։ Ուսումնարանը Նոյեմբ. 16ին դիմումէ խնդրագրով Վեհափառից թոյլ տալ արական սեռից եւս 4 հոգաբարձու ընտրել.—անպատասխան է մնում։

Իմ բարեկամները մինչև այսօր էլ չեն կարողանում, թէ չեն կամենում հաւատալ, որ ինքը Նորին Վեհափառութիւնն էր օրիորդաց դպրոցի համար արական սեռից հոգաբարձուներ ունենալուն ընդդէմ։

Ուսումնարանը գնալով աւելի յառաջադիմումէ, աշակերտուհիների թիւը—հակառակ անբարեմիտների ցանկութեան—շատանումէ հասնելով մինչև 125ի։ Այս թուականի մուտքն է՝ մայր գումարը 656 ր. 35 կ. Թատրոնից 649 ր. 25 կ. վիճակախաղից 401 ր. 51 կ. Նուէրներ 360 ր. Թոշակագրամ 1458 ր. 40 կ. տոկոսիք 50 ր. բոլորը 357 ր. 51 կ. ծախսը՝ 2964 ր. ռոճիկներ. 86 ր. ծառային 75 ր. 32 կ. ձեռագործի իրեղէնների 95 ր. 60 կ. վառելափայտի 45 ր. 38 կ. զանազան մանր ծախքեր բոլորը 3266 ր. 30 կ. հանելով մուտքից մնումէ 309 ր. 21 կ. սրա վրայ հաշուելով և Պօղոս Պետրոսից ստանալի 500 ր. ընդ ամենը 809 ր. 21 կ.

Այս թուին եւս կան 900 ր. ստացող ուսուցիչներ. իսկ ես տեսչութեանս համար ստանումեմ 600 ր. միւս պարապմունքները նոյնն են։

ԺԱ.

Ամեն համբերութիւն իր սահմանն ունի. ես չունէի այն հազուագիւտ երկաթեայ կամքը և այն անընկճելի ուժը, որ մինչև կեանքիս վերջը կռուէի. Թուլացայ—ստանալով իմ արածների փոխարէն միայն թշնամանք, բամբասանք ու հալածանք այնպիսիների կողմից, որոնց մէջ ես գաղափարական մարդ, ազնիւ ու բարեկիրթ անհատներ կը կամենայի տեսնել, որոնց մէջ ճշմարտի և արդարի պաշտպան կուզէի հաւատալ և ոչ թէ իրենց անձնական կրքերին բաւականութիւն տուող անձեր ճանաչել և տեսնել նրանց։

Վերջապէս քանի քանիցս թէ խնդրագրերով և բարեկամներիս միջնորդութեամբ խնդրումեմ Նորին Վեհափառութիւնից թոյլ տալ արական սեռից եւս հոգաբարձուներ ընտրել։ Ժողովվումեն, ժողովրդի կող-

մից պատգամաւորներ ուղարկում Նորին Վեհափառութեանը հոգաբարձուներ ընտրելու թոյլտուութիւն ստանալու համար. Կայանում է համաձայնութիւն. Պատգամաւորները ընտրում են 4 հոգի տիկիններից և 4 հոգի պարոններից ու առաջարկում են բարձրագոյն Իշխանութեան հաստատութեանը.

Այս ամենը վերջանում է նրանով, որ Նորին Վեհափառութիւնը Ապրիլի 4ին ուղարկում է իր Հայրապետական կոնդակը, որով տիկիններին հաստատում է հոգաբարձու, իսկ պարոնները՝ օգնականներ.

Ուրեմն մնում է ինձ 1882 թ. Յունվարի 1ից մինչև Ապրիլի 15ի հահաշիւը ներկայացնել օրհնեալ հայ հասարակութեանը. միևնոյն ժամանակ խոստովանելով որ վհատած եմ գործել այս թւին.

Ռոճիկս և պարապմունքներս նոյնն են, դասատուններ միևնոյնն են. առարկաները՝ նոյնպէս. աշակերտուհիների թիւը 95. Մ---ի ց15 Ապրիլի 309 ր. 21 կ. մայր գումարը. 185 ր. 10 կ. նուէրներ 176 ր. 50 կ. վիճակախաղից. 509 ր. թոշակագրամ. 8 ր. 75 կ. տոկոսիք ընդամենը 1047 ր. 56 կ. Ծ-խ-ք՝ 633 ր. ռոճիկ, 24 ր. ծառային. 19 ր. 10 կ. ձեռարործի (որը նուիրել եմ իմ սեփհականութիւնից) 16 ր. 20 կ. գառազան մանր ծախսեր, ընդամենը 692 ր. 30 կ. մնում է 355 ր. 26 ր. որ և յանձնուեց նոր հաստատուած հոգաբարձութեանը, կցելով հետը իմ տուած 145 ր. 50 կ. ուրեմն ընդամենը՝ 500 ր. 76. Նրա հետ միասին և ապառիկների մի ցուցակ, որից պարզ երևում էր, որ ուսումնարանը ունի 1000 ր. Պօղոս-Պետրոսից ստանալիք և 630 ր. զանազան անձինքներից, որը կտակած և որը աւանդած.

ԺԲ.

Ընթերցողը գուցէ յիշելիս լինի, որ մինչև վերջին օրերս էլ յիշատակեցին լրագիրներում պարոնները թէ՝ Գայիանեան ուսումնարանը այսքան տարի հիմնուած է և ոչ մի կոպէկ դրամագլուխ չունի. Ես արժան չհամարեցի պատասխանել, որովհետև հաստատ համոզուած էի, որ նոյն ինքը գրողը գիտէ որ սուտ է գրել. Գայիանեան ուսումնարանն ունեցել է ահագին ծախքեր. Գայիանեան ուսումնարանի թատրոնական բեմ, որի տուած արդիւնքները թող ընթերցողը կարդայ հաշիւների մէջ և ինքը ասի թէ քանի հազար դրամագլխին կարող է հաւասարուիլ և իմ օրօք յանձնուել է նոր հոգաբարձութեանը 499 ր. 26 կ. կանխիկ դրամ. 1630 ր. ապառիկների ցուցակ, որոնցից ոչ մի կոպէկն էլ կորչող չէ, բացի այս՝ ունի ստանալիք և Ասպահանցի Պ. Յովսէփի կտակածից 1500 ր.

Վերջապէս թէ այսպէս և թէ այնպէս՝ որքան կարողացել եմ, որքան կարողութիւնս ներել է՝ աշխատել եմ. բաւական չեն՝ թող այսուհետև մէկին տասը արդիւնաւորեն. այդ կլինի իմ և հասարակութեան ուրախութիւնն ու բաղձանքը.

Այստեղ շատ տեղն է յիշել, թէ և ուշադիր ընթերցողը արդէն նկատած կլինի, որ ես ինչ որ արել եմ, ինչքան որ անյուսահատ եմ մընացել, գործելուց չեմ փախել, այդ ամենով պարտական եմ Նորին Վեհափառութեան քաղցրալիր յորդորներին, հայրական խրախուսանքներին և իշխանական ձեռընտուութեանը։ Երբէք չեմ մոռանալ այն սիրալիր ընդունելութիւնները՝ որ ցոյց էր տալիս Նորին Վեհ օծութիւնը ամեն ժամանակ, երբ դիմուէի Նրան թէ խնդրագրով՝ և թէ խօսքով։ Կարճ ասեմ՝ Երևանայ Գայիանեան ուսումնարանը Վեհափառ Հայրապետի խրախուսանաց և իշխանական հովանաւորութեան պտուղն է այնտեղ կանգնած։ Անմոռանալի և ամենամեծ վարձատրութիւնն են ինձ համար Վեհաշնորհ Հայրապետի բերանից բղխած յորդորները, քաջալերութիւնները և օրհնութիւններն, որ այնքան առատութեամբ թափուէր խոնարհ ծառայիս վրա ամեն անգամ, երբ կարիքը, երբ թշնամական թակարդները դէպի Նորին սրբութեան ոտն էր մղում ինձ . . . Եւ միշտ վերագառնուէի նոր ուժ, նոր զօրութիւն ստացած . . . ։

Մէկի տեղ այժմ 16 հոգուց բաղկացած խումբն է գործող և ես ներկայ թուի սեպտեմբերի 29 ին կնքեցի դպրոցական ասպարիզում իմ գործառնութիւնը տալով վերջնական հրաժարականս մինը՝ տեղւոյս գերապատիւ Փոխանորդին և միւսը՝ Նորին Վեհափառութեանը, որից որդիական խոնարհութեամբ աղաչուեմ ազատել ինձ ծանր տանջանքներից, միևնոյն ժամանակը յոյս յայտնելով, որ դպրոցի արդի գործողները յուսալի են, կարդիւնաւորեն առանց ինձ։ Ես հրաժարուեցի ամեն պաշտօններից նախ՝ որ հանգիստ ու դադար տամ անձիս, որ 1856 թուականից մինչև 1882 թ. բաւական չարչարուեց դպրոցական ասպարիզում և բ. որ—ազատ առանց ինձ—գործեն այժմեան հոգաբարձուհիները ու հոգաբարձուները, որոնց համար մաղթուեմ երկնաւոր Հօրից տոկունութիւն և հաստատակամութիւն, մեծահոգութիւն և գործասիրութիւն, որպէս զի տասնապատիկ աւելի արդիւնաւոր առնեն իրենց խնամոցը յանձնուած մեծ գործը։

Գալով ինձ՝ ամեն անգամ երբ Գայիանեան ուսումնարանի մօտից անցնելուս նայուեմ նրան—ուրախանուեմ հոգւով, մխիթարվուեմ ես—իմ քաշած բոլոր նեղսակրանքները մոռանուեմ ես։

Վերջ տալով խօսքիս՝ օրհնուեմ սրտիս խորքից Հայ հասարակութիւնը, օրհնուեմ նրա համար սրտացաւութեամբ քրտնող մշակի կեանքը, ցանկանուեմ մեր գործողներին սէր և միութիւն յանուն ժողովրդի, ի շահ հասարակութեան, ի բարգաւաճումն հայի գործ կատարելու ժամանակ։ Թող ամենեին չվհատուին, թող իսկոյն և եթ շնորհակալութեան ու վարձատրութեան աչք չունենան, թող նոյն իսկ իրենց խղճմտանքի մաքրութիւնը, գործի վսեմութիւնը, իրենց կոչումի վեհութիւնը քաջալերէ և ոգևորէ նրանց։ Թող մարդիկ իւրեանց վար-

ձատրութիւնն իրենց խղճի արդարութեան և գործերի սրբութեան մէջ որոնեն. Թող մանկական կայր հաւատով հաւատան, որ ճշմարիտ գործը չի ծածկուիլ, որ արդարութիւնը Աստուծոյ ձայնն է, միշտ յաղթող, միշտ փայլուն։

Կրկին և կրկին անգամ օրհնելով Երևանայ Հայ-հասարակութիւնը, օրհնելով Գայիանեան ուսումնարանը, օրհնելով նրա մէջ բոլոր գործողների կեանքը՝ մնում եմ նրանց արդիւնաւոր գործունէութեանը ամենայն անհամբերութեամբ ակնկալու՝

ՅՈՎՍԷՓ Ա. Ք. ՄԵԼԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,

ՁԽԱՐ գիւղից Արժ. Եղիշէ քահանայ Քթփամաջեանցը մեզ կգրէ թէ՝ «Գիւղիս Մելիք-Հայկազեանց Հայկ. երկսեռ վարժարանի աշակերտաց թիւը այս առաջին տարուան մէջ վաթսունի հասաւ և չորս բաժանմանց վերածուած են. առաջին բաժանմունքը առանձին դասարանի, իսկ միւս մասերը սրահի մէջ զետեղուած են։ Առաջին բաժանման մի մասը արդէն սկսած են Սրբազան պատմութիւն հին Կտակարանի Հայորդւոյ, զոր կթարգմանեն Վրացերէնի և կպատմեն Հայ բարբառով. Նոյնպէս կթարգմանեն խիստ աննշան սխալներով Վրացերէնէ ի Հայ, զանազան բարդյալից և համառօտ խրատներ, որոնք խմբագրեալ են ի մէնջ։ Թուաբանութիւնը մինչև հազարաւոր թիւերը կգրեն և կգումարեն, բաց յայսմանէ կիրակամտի փոխերն, երգերն, մեսեդիներն ի Քէն հայցեմքը, Փառք ի բարձունսը, Մայր սուրբը, պատարագի երգեցողութիւններն, կիրակնօրեայ և տաղաւարաց ժամամուտերն ամբողջ սովրած են։ Սովրած են նաև քանի մի նշանաւոր շարականներ, նոյնպէս և տասն երեք հատ ազգային երգեր։

Երկրորդ բաժանման աշակերտներն «Աղայեանց Մայրենի լեզուն» աւարտելով «Տէր Ղեւոնդեանց Մայրենի լեզուն» սկսած են և մեր կողմանէ խմբագրեալ զանազան ոտանաւորներով վարժութիւն կանեն և միմեանց զանազան հարցումներ կուղղեն. Սոյն մասը մինչև հարիւրաւոր թիւերը կգրեն. իսկ միւս երկու բաժանմունքները «Աղայեանց Ընթերցարանները» կկարդան, Վրացերէն կթարգմանեն, գրավարժութեամբ միաւոր թիւեր կգրեն և մինչև յիսուն թիւերը Հայերէն կհամարեն. վասն զի դեռ շատ փոքր են, ուստի մեր յառաջադէմ աշակերտներն ամեն օր նոցա հարցմունքներ կուղղեն այսպէս, «[illegible] եւն. եւն.

Առաջին և երկրորդ բաժանման աշակերտներն Հայերէն պարզ կխօ-